ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հունիսի 2023 թվականի №----Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՈՒԳԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) իրականացրած՝ 2022 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից սպառման համակարգերի՝ բաշխման ցանցին միացման գործընթացի վերլուծության արդյունքում պարզվել է, որ մի շարք դեպքերում չեն պահպանվել սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման գործընթացը կարգավորող իրավական ակտով՝ Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №523-Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոններով (այսուհետ՝ Կանոններ) սահմանված ժամկետները,
2) հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը 2023 թվականի մայիսի 5-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կանոններով սահմանված պահանջների հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 5-ի №ԳԲ/34.3-Մ2-13/1467-2023 գրությամբ,

3) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2023 թվականի մայիսի 22-ի №Ե-673-23 գրությամբ ներկայացրել է իր պարզաբանումները, մասնավորապես՝ Կանոններով սահմանված ժամկետների չպահպանումը պայմանավորելով բնակիչների կողմից աշխատանքների խոչընդոտմամբ, դիմող անձանց կողմից դիմումներից հրաժարմամբ, դիմող անձանց սպառման համակարգերն էլեկտրաէներգիայի ընդունմանը պատրաստ չլինելով, դիմող անձանց հետ ժամկետների երկարաձգման համաձայնագրերի կնքմամբ, տեղական ինքնակառավարման մարմինների գործողություններով և այլն,

4) Կանոնների 170-րդ կետի համաձայն՝ Կանոնների 162-րդ կետում նշված պայմանագրով, իսկ ԷԲՑ կանոնների 166-րդ կետով նախատեսված դեպքում՝ համաձայնագրով նախատեսված կանխավճարի (կառուցապատողի դեպքում՝ միացման վճարի) վճարման օրվանից, բացառությամբ Կանոնների 164-րդ կետում նշված դեպքերի, մինչև դիմող անձին էլեկտրամատակարարման (դրա հնարավորության) ապահովման առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել՝

1) բաշխման ցանցին 0,22 կՎ լարմամբ պարզեցված միացման դեպքում՝ 15 աշխատանքային օրը, բաշխման ցանցին 0,22 կՎ լարմամբ միացման մնացած բոլոր դեպքերում՝ 50 օրը,

2) բաշխման ցանցին 0,4 կՎ լարմամբ պարզեցված միացման դեպքում՝ 15 աշխատանքային օրը, բաշխման ցանցին 0,4 կՎ լարմամբ միացման մնացած բոլոր դեպքերում՝ 55 օրը,

3) բաշխման ցանցին 6(10) կՎ լարմամբ միացման դեպքում՝ 90 օրը,

4) բաշխման ցանցին 35կՎ լարմամբ կամ կառուցվող բազմաբնակարան շենքի կամ կառուցապատվող թաղամասի միացման դեպքում՝ 290 օրը,

5) Կանոնների 174-րդ կետի համաձայն՝ Կանոնների 170-րդ կետում նշված ժամկետների խախտման դեպքում դրա պատճառների և էլեկտրամատակարարման (դրա հնարավորության) ապահովման ակնկալվող ժամկետների մասին բաշխողը պարտավոր է գրավոր տեղեկացնել դիմող անձին՝ խախտման պատճառներն ի հայտ գալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում,

6) Կանոնների 273-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ Կանոնների 174-րդ կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում բաշխողը սպառողին կամ դիմող անձին վճարում է տույժ,

7) Կանոնների 274-րդ կետի համաձայն՝ Կանոնների 273-րդ կետով նախատեսված դեպքերում բաշխողը վճարում է տույժ՝

1) սպառողի դեպքում՝ սպառված էլեկտրաէներգիայի միջին ամսական արժեքի 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 2500 դրամը,

2) դիմող անձի դեպքում՝ 2500 դրամի չափով, բացառությամբ ԷԲՑ կանոնների 170-րդ և 173-րդ կետերի, որոնց դեպքերում բաշխողը դիմող անձին վճարում է տույժ կետանցի յուրաքանչյուր օրվա համար միացման վճարի 0,5 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան միացման վճարի ընդհանուր գումարը,

8) Կաննոնների 275-րդ ու 275.1-ին կետերի համաձայն՝ սպառողի դեպքում հաշվարկված տույժը բաշխողը հաշվի է առնում սպառողի ընթացիկ ամսում ծախսած էլեկտրական էներգիայի համար ներկայացվելիք հաշվարկային փաստաթղթում: Հաշվարկված տույժը հաշվարկային փաստաթղթում նշվում է առանձին տողով և նվազեցվում է մատակարարված էլեկտրական էներգիայի արժեքից, իսկ մատակարարի սպառողի դեպքում՝ բաշխման ծառայության արժեքից: Դիմող անձի դեպքում հաշվարկված տույժը բաշխողը հաշվի է առնում դիմող անձի միացմանը հաջորդող ամսում՝ Կանոնների 275-րդ կետով սահմանված կարգով, իսկ բազմաբնակարան շենքի կամ կառուցապատվող թաղամասի կառուցապատող դիմող անձի դեպքում տույժը փոխանցվում է վերջինիս նախընտրած և օրենսդրությամբ սահմանված ձևով՝ նույն ժամկետում: Սպառող չդառնալու դեպքում տույժը վճարվում է դիմող անձի նախընտրած և օրենսդրությամբ սահմանված ձևով՝ վերջինիս կողմից պայմանագիրը լուծելուց հետո հնգօրյա ժամկետում,

9) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ մի շարք դեպքերում խախտվել են Կանոններով սահմանված՝ սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման ժամկետները, դիմող անձինք ու սպառողները սահմանված կարգով չեն ծանուցվել միացման ժամկետների ուշացման պատճառների մասին ու նրանց չեն վճարվել Կանոններով նախատեսված

տույժերը, ինչն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ դիմող անձանց (սպառողների) իրավունքների կամ օրինական շահերի խախտման, իսկ Ընկերության ներկայացրած պատճառաբանությունները բավարար հիմնավորված չեն և չեն կարող հիմքն հանդիսանալ նշված խախտումների համար վերջինիս պատասխանատվության չենթարկելու համար: Մասնավորապես, հաշվետու եռամսյակի վերջին դրությամբ Ընկերության գործունեության արդյունքում.

ա. 950 սպառման համակարգեր Կանոններով նախատեսված ժամկետներում միացված չեն եղել բաշխման ցանցին,

բ. 6322 դեպքում սպառման համակարգերն էլեկտրական ցանցին են միացվել Կանոններով նախատեսված ժամկետների խախտմամբ,

գ. 1870 դեպքում դիմող անձինք չեն ծանուցվել միացման ժամկետների խախտման պատճառների և էլեկտրամատակարարման (դրա հնարավորության) ապահովման ակնկալվող ժամկետների մասին, ու վերջիններիս չեն վճարվել Կանոններով նախատեսված տույժերը,

և հիմք ընդունելով ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին, 6-րդ մասերը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կանոնների 170-րդ, 174-րդ ու 273-րդ կետերով սահմանված պահանջների խախտման համար Ընկերությանը տուգանել 20 000 000 (քսան միլիոն) դրամ գումարի չափով:
2. Ընկերությանը՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում դիմող անձանց ու սպառողներին վճարել Կանոնների 174-րդ կետի պահանջի խախտման համար նախատեսված տույժերը ու այդ մասին Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն.

3) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել էլեկտրական ցանցին միացման ժամկետներում չմիացված սպառման համակարգերի՝ էլեկտրական ցանցին միացմանն ուղղված Ընկերության ձեռնարկելիք քայլերի վերաբերյալ տեղեկատվություն.
4) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել սպառման համակարգերի՝ էլեկտրական ցանցին միացման գործընթացի բարելավման վերաբերյալ Ընկերության առաջարկությունները:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը՝ բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքերի:
4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հունիսի 2023թ.